ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 168

<25> 08 2014թ.

ք. Արտաշատ

ԷՌՆԵՍՏ ԲԱԼՈՒՅԱՆՑԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգքրի 158-րդ, 159-րդ և 163-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

1. ,,Հովտաշատի ԱԱՊԿ ,, ՓԲԸ –ի տնօրեն Էռնեստ Բալոյանցին տրամադրել 2014 թվականի ամենամյա արձակուրդը՝ ս/թ օգոստոսի 29-ից սեպտեմբերի 29-ը ներառյալ:

2. Տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել ,,Հովտաշատի ԱԱՊԿ ,, ՓԲԸ –ի ընտանեկան բժիշկ Նաիրա Վարդազարյանի վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 169

<25> 08 2014թ.

գ. Արտաշատ

<<ՆՈՅԱԿԵՐՏԻ ԱԱՊԿ>> ՓԲԸ-ՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2014 թվականի տարեկան ծրագրով.

1. «Նոյակերտի ԱԱՊԿ» ՓԲԸ-ում սույն թվականի օգոստոսի 25-ից մինչև օգոստոսի 29-ը՝ 5 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել «Նոյակերտի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի կողմից 2011, 2012 և 2013 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախահաշիվներով հաստատված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 170

<<25>> << 08 >> 2014թ. ք. Արտաշատ

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՇՈՏԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության>> կարգի 34-րդ կետով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյանի Թ. Փոստաջյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2014թ. օգոստոսի 19-ի որոշումը.

2014թ. Օգոստոսի 25-ից Ռուզաննա Աշոտի Թադևոսյանին նշանակել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյանի Թ. Փոստաջյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 171

<25> 08 2014թ.

գ. Արտաշատ

<< ՄԱՍԻՍԻ ԲԿ >> ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածով, 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2014 թվականի օգոստոսի 20-ի թիվ 83 որոշմամբ ստեղծված մրցութային հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 21-ի թիվ 3 որոշումը՝

1. մրցույթում հաղթող ճանաչված Ալեքսանդր Գեորգիի Ղուկասյանին 2014 թվականի օգոստոսի 25 -ից նշանակել <<Մասիսի Բկ>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն՝ կնքելով նրա հետ աշխատանքային պայմանագիր 3 տարի ժամկետով
2. <<Մասիսի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար Վարդան Մեսրոպյանին 2014 թվականի օգոստոսի 25 -ից ազատել պաշտոնակատարի պարտականությունների կատարումից:
3. ընդունում-հանձնում կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

<<ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ի ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ *ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ*

ՈՐՈՇՈՒՄ N 3

ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի N87-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի 60-րդ, 70-րդ, 71-73-րդ հոդվածներով՝

<< Մասիսի բժշկական կենտրոն >> ՓԲԸ-ի տնօրենի թափուր տեղի համար 2014 թվականի օգոստոսի 21-ին Արարատի մարզպետարանում անցկացված մրցույթում հաղթող է(են) ճանաչվել Ստեփան Խաչատրյան:

Հանձնաժողովի նախագահ՝ Ստեփան Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկ Բաղալյան

Հանձնաժողովի անդամներ՝

Գուրգեն Եղիազարյան

Վարուժան Գրիգորյան

Գագիկ Պողոսյան

Գեղամ Միրզոյան

Արայիկ Սարդարյան

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2014թ. օգոստոսի «25»
N 171 կարգադրության

ԸՆԴՈՒՆՈՂ-ՀԱՆՁՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

հանձնաժողովի նախագահ՝

Ստեփան Խաչատրյան — ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Գուրգեն Եղիազարյան — ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,

Արտակ Մուրադյան — << Մասիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնտեսվար,

Վարդան Մեսրոպյան — հանձնող

Ալեքսանդր Ղուկասյան — ընդունող:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ